ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԻԿ ԱՐՄԵՆԻ ԹՈՐՈՍՅԱՆ

Աշխատանքի շուկայի ինստիտուտները որպես եկամուտների անհավասարաչափ բաշխման կարգավորման գործիք(ՀՀ օրինակով)

Ը.00.01 «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝	ՖԻՐՈՒԶԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱՅԻԼՅԱՆ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	ԴԱՎՈՅԱՆ ՍԱՄՍՈՆ ԱՇՈՏԻ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
	ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ ՆՈՐԻԿԻ Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հուլիսի 8-ին, ժամը՝ 13:30-ին Երևանի պետական համալսարանում (0025, ք. Երևան, Աբովյան փ. 52) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհուրդում:

Ատենախոսության կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի հունիսի 6-ին:

015 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Տնտեսագիտության թեկնածու., դոցենտ Հակոբջանյան Աննա Հովիկի

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտական թեմայի արդիականությունը: Եկամուտների անհավասարաչափ բաշխման խնդիրը մարդկության պատմության ամբողջ ընթացքում եղել է երկրների առջև ծառացած կարևոր մարտահրավերներից մեկը: Թեև համաշխարհային տնտեսության գլոբալացումը և տեխնոլոգիական առաջընթացը նպաստել են զգալի տնտեսական առաջընթացին, սակայն դա նաև նպաստել է բնակչության տարբեր շերտերի եկամուտների միջև զգալի անհավասարությանը: Մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հասարակության տարբեր շերտերի միջև ձևավորվում է եկամուտների անհավասարություն: Միկրո մակարդակում նման անհավասարության պատճառ կարող են լինել մարդկանց մտավոր և ֆիզիկական ունակությունների կամ կրթական մակարդակի տարբերությունները, բախտը, հաջողությունը և ժառանգությունը: Մակրո մակարդակում եկամուտների անհավասարության առաջացման հիմնական պատճառներն են՝ պետության կողմից վարվող վերաբաշխողական, գիտատեխնիկական, սոցիալական և կրթական քաղաքականությունները: Սակայն, մեր ընկալմամբ, եկամուտների անհավասարություն առաջացնող առանցքային պատճառներից է նաև աշխատանքի շուկայի ինստիտիուտների ցածր արդյունավետությունը: Ներկայումս աշխարհի գրեթե բոլոր երկրներում բնակչության եկամուտների կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող եկամտի աղբյուրը աշխատանքային եկամուտներն են: Հետևաբար՝ աշխատանքի շուկայում ձևավորված «խաղի կանոնները» ունակ են առանցքային դերակատարություն ունենալ հասարակության եկամուտների բաշխվածության վրա:

Աշխատանքի շուկայի մի շարք ինստիտիուտներ գոյություն ունեն, որոնք կառավարությունները օգտագործում են աշխատանքի շուկայում իրենց ակտիվ և պասիվ քաղաքականության իրականացման ժամանակ: Այս ատենախոսության շրջանակներում ուսումնասիրության համար ընտրվել են այդ ինստիտուտներից մի քանիսը, որոնք առանցքային ազդեցություն են ունենում եկամուտների անհավասարության վրա: Աշխատանքի շուկայի այդ ինստիտուտներից են՝ նվազագույն աշխատավարձի համակարգը, արհմիությունները, զբաղվածության պաշտպանության օրենսդրությունը և աշխատանքի պահպանման սխեմաները: Այս ինստիտուտներից յուրաքանչյուրը՝ իր գործառույթների սահմաններում, ազդում է աշխատանքի շուկայի այս կամ այն ասպեկտի վրա: Շատ հաճախ դրանց ազդեցության շրջանակ համընկնում են, և այս ինստիտուտները համատեղ ազդում են աշխատանքի շուկայի վրա, հետևաբար նաև՝ աշխատողների աշխատանքային եկամուտների և ընդհանուր բնակչության շրջանում եկամուտների անհավասարության վրա:

Վերջին տարիներին աշխարհում հաճախակի դարձած ճգնաժամերը՝ պատերազմները, համավարակները և գլոբալ տնտեսական անկայունությունները, առավել արդիական են դարձրել եկամուտների

անհավասարության հիմնախնդրի ուսումնասիրությունը: Կորոնավիրուսային համավարակը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը և սոցիալական համակարգը բավարարչափ պատրաստ չեն նման մարտահրավերների դիմակայելու համար: Այս փաստը հաստատվում է նաև Ջինիի գործակցի դինամիկայով, որը կորոնավիրուսի հավարակի ժամանակ կտրուկ աճեց: Թեև վերջին տարիներին այս ցուցանիշը նվազել է, սակայն այն մշտապես ունեցել է տատանողական բնույթ, ինչը վկայում է համակարգային խոցելիությունների մասին:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունում գործող աշխատանքի շուկայի մի շարք ինստիտուտներ ցուցաբերում են ցածր արդյունավետություն՝ չկարողանալով մեղմել եկամուտների բևեռացումը: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցության ուսումնասիրությունը եկամուտների անհավասարության վրա դառնում է ոչ միայն գիտական հետաքրքրություն, այլև պետական քաղաքականության մշակման և սոցիալական կայունության ապահովման առաջնահերթ խնդիր: Ավելին՝ նոր հնարավոր ճգնաժամերի և պատերազմների հավանականության պայմաններում այս թեմայի ուսումնասիրությունը ձեռք է բերում ոչ թե տեսական, այլ խիստ կիրառական նշանակություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել ՀՀ-ում աշխատանքի շուկայի ինստիտուտների դերը եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնախնդրի կարգավորման գործում: Ելնելով սահմանված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել աշխատանքի շուկայի ինստիտուտների տեսակները ու գործառույթները և եկամուտների անհավասարության հիմնախնդիրը ու դրա էությունը,
- ուսումնասիրել տարբեր հեղինակների մոտեցումները եկամուտների անհավասարության վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցության վերաբերյալ,
- վերլուծել ՀՀ-ում աշխատանքի շուկայի ինստիտուտների գործառույթները և իրավական կարգավորումները,
- հետազոտել ՀՀ-ում եկամուտների անհավասարությունը բնութագրող ցուցանիշները,
- գնահատել եկամուտների անհավասարության վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցությունը,
- առաջարկել աշխատանքի շուկայի ինստիտուտների կատարելագործման ուղիներ,
- գնահատել աշխատանքի շուկայի նոր ինստիտուտների ներդրման հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտներն են ՀՀ աշխատանքի շուկայում գործող ինստիտուտները, ՀՀ-ում եկամուտների

բաշխման գործող համակարգն ու դրանով պայմանավորված եկամուտների անհավասարության հիմնախնդիրը: Հետազոտության առարկան է եկամուտների անհավասարության վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցության մեխանիզմն ու ուղղությունները:

Հետազոտության մեթոդական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, մասնավորապես՝ համեմատական վերլուծության, նկարագրական և էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության որոշումները, օրենսդրական այլ ակտեր, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական վիճակագրական վարչության կողմից հրապարակած զեկույցները, հոդվածները և աշխատանքային փաստաթղթերը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել վերոնշյալ կառույցների պաշտոնական կայքերը, դրանցում հրապարակված տվյալները, պաշտոնական տեղեկագրերը և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազաները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- Հետազոտության շրջանակներում մշակված եկամուտների անհավասարությունը բնութագրող նոր ինդեքս ցուցանիշի միջոցով հաշվարկվել են առաջին և հինգերորդ քվանտիլային խմբերի բնակչության եկամուտների և եկամուտների անհավասարության փոփոխության տեմպն ու ուղղությունը եռամսյակային կտրվածքով:
- Պանելային մոդելների օգնությամբ հաշվարկվել է նվազագույն աշխատավարձի ազդեցությունը եկամուտների անհավասարության, ընդհանուր գործազրկության մակարդակի և երիտասարդների շրջանում գործազրկության մակարդակի վրա՝ ինչպես տարածաշրջանային և ազգային նվազագույն աշխատավարձի համակարգեր ունեցող, այնպես էլ ոլորտային և մասնագիտական նվազագույն աշխատավարձի համակարգեր ունեցող երկրներում, որի միջոցով հնարավոր է եղել գնահատել նվազագույն աշխատավարձի երկու համակարգերի արդյունավետությունների տարբերությունները եկամուտների անհավասարության հիմնախնդրի կարգավորման գործում:
- Պանելային մոդելների օգնությամբ հաշվարկվել է արհմիությունների խտության ցուցանիշի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա, որի միջոցով հնարավոր է եղել ուսումնասիրել ՀՀ-ում արհմիությունների անարդյունավետ գործունեության պատճառները:

- Գնահատվել է ՀՀ-ում գործող նվազագույն աշխատավարձի ազդեցությունը միջին աշխատավարձի, աշխատանքի արտադրողականության և զբաղվածության մակարդակների վրա և ստացված արդյունքների հիման վրա քննարկվել և հիմնավորվել է ՀՀ-ում ոլորտային նվազագույն աշխատավարձի ներդրման հնարավորությունը:
- Գնահատվել է կորոնավիրուսով վարակվածների թվաքանակի աճի տեմպի ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա՝ ինչպես աշխատանքի պահպանման սխեմաները որպես երկարաժամկետ քաղաքականության գործիք օգտագործող, այնպես էլ որպես կարճաժամկետ քաղաքականության գործիք օգտագործող երկրներում, ինչի արդյունքում հնարավոր է եղել պարզել աշխատանքի պահպանման սխեմաների առավել արդյունավետ օգտագործման եղանակը:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ատենախոսության արդյունքները գործնական նշանակություն ունեն քաղաքականություն մշակողների, տնտեսագետների և հետազոտողների համար: Վերլուծելով ՀՀ-ում առկա աշխատանքի շուկայի ինստիտուտների ուժեղ և թույլ կողմերը՝ ուսումնասիրությունը հիմք է տալիս փաստացի քաղաքական միջամտություններին, որոնք ուղղված են եկամուտների անհավասարության նվազեցմանը: Արդյունքները կարող են օգնել պետական մարմիններին և արհմիություններին տեղեկանալ արդյունավետ աշխատանքային ռազմավարությունների մասին՝ խթանելու արդար աշխատանքային պրակտիկան, նվազեցնելու աշխատավարձերի անհավասարությունը և ամրապնդել սոցիալական ապահովության ցանցերը: Ավելին, ատենախոսությունը նպաստում է եկամուտների անհավասարության վերաբերյալ ավելի լայն ակադեմիական քննարկումներին:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է 161 էջ՝ առանց հավելվածների:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և սուբյեկտը, ատենախոսության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, աշխատանքի գիտական նորույթները և ատենախոսության գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Աշխատանքի շուկայի ինստիտուտներ և եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնախնդիրը» նվիրված է ատենախոսության շրջանակներում ուսումնասիրված աշխատանքի շուկայի ինստիտուտների (նվազագույն աշխատավարձի, արհմիությունների, զբաղվածության պաշտպանության օրենսդրության և աշխատանքի

պահպանման սխեմաների) էության, տեսակների, գերծառույթների և ազդեցության շրջանակների, ինչպես նաև եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնախնդրի էության, առաջացման պատճառների և հետևանքների համակողմանի ուսումնասիրությանը: Քննարկվել են նաև եկամուտների անհավասարաչափ բաշխման վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցության գնահատման տեսամեթոդական հիմնահարցերը:

Աշխատանքի շուկայի ինստիտուտները կոնվենցիաների, օրենքների և նորմերի համակարգ է, որի միջոցով սահմանվում են աշխատանքային պայմանագրերում աշխատավարձերի մակարդակը, աշխատանքային ժամերը, աշխատանքային պայմանները, կոլեկտիվ պայմանագրերի կանոնները և սոցիալական պաշտպանության դրույթները: Դրանք կարող են լինել ֆորմալ և ոչ ֆորմալ, սակայն բոլոր դեպքերում ազդում են աշխատանքի շուկայի կառուցվածքի և արդյունքների վրա: Աշխատանքի շուկայի ինստիտուտների ձևավորումը սկզիբ է առնում 19-րդ դարի երկրորդ կեսից, իսկ ժամանակակից ինստիտուցիոնալ շրջանակը ձևավորվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: 1980-ական թվականներից սկսած աշխատանքի շուկայի ինստիտուտների վերաբերյալ տարբեր տնտեսագետների մոտեցումների տարբերությունները բանավեճերի պատճառ են դարձել՝ պայմանավորված երկրներում աշխատանքային շուկայի ինստիտուտների արդյունավետությունների տարբերությամբ:

Այս ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել է աշխատանքի շուկայի չորս ինստիտուտներ՝ նվազագույն աշխատավարձերի համակարգը, արհմիությունները, զբաղվածության պաշտպանության օրենսդրությունը և աշխատանքի պահպանման սխեմաները: Այս ինստիտուտները ազդում են ինչպես աշխատանքի շուկայի, այնպես էլ տնտեսության տարբեր ասպեկտների վրա, սակայն դրանց ազդեցության չափերի և ուղղությունների վերաբերյալ տնտեսագետների մոտեցումները տարբերվում են՝ շատ հաճախ հակասելով միմյանց:

Եկամուտների անհավասարաչափ բաշխման հիմնախնդիրը երկրների առջև ծառացած արդի հիմնախնդիրներից մեկն է: ԱՄԿ-ի և ՄԱԿ-ի փաստաթղթերում երկամուտների անհավասարությունը դիտարկվում է որպես աճող վտանգ, որը կարող է խորացնել սոցիալական բևեռացումը և դանդաղեցնել զարգացման տեմպերը: Եկամուտների անհավարության առաջացման պատճառները կարող են լինել ինչպես միկրո մակարդակում, այնպես էլ մակրո մակարդակում: Սակայն այս պատճառների մեջ իրենց առանձնակի կարևորությունը ունեն աշխատանքի շուկայի ինստիտուտները, քանի որ դրանք են սահմանում աշխատանքի շուկայում «խաղի կանոնները»՝ էականորեն ազդելով բնակչության շրջանում եկամուտների բաշխվածության վրա:

Եկամուտների անհավասարության վրա նվազագույն աշխատավարձի համակարգի ազդեցության վերաբերյալ տնտեսագետների տեսակետները շատ

հաճախ հակասում են միմյանց: Ըստ որոշ տնտեսագետների նվազագույն աշխատավարձը եկամուտների անհավասարության վրա ազդում է զբաղվածության միջոցով: Զարգացած երկրներում կատարված էմպիրիկ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նվազագույն աշխատավարձի բարձրացումը կարող է նվազեցնել երիտասարդների և ցածր որակավորում ունեցողների շրջանում զբաղվածությունը: Սակայն զարգացող երկրներում կատարված էմպիրիկ ուսումնասիրությունները ոչ միշտ են նույն արդյունքները ստացել: Մեր կարծիքով այս ազդեցությունը ավելի ցայտուն է մոնոպսոնիստական շուկաներում, մինչդեռ մրցակցային միջավայրում այն կարող է նպաստել աշխատողների եկամուտների ավելացմանը՝ առանց զբաղվածության էական կրճատման:

Եկամուտների անհավասարության վրա արհմիությունների ազդեցության վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից իրականացված էմպիրիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած դրանց խտությունը էականորեն ազդում է եկամուտների անհավասարաչափ բաշխման վրա դրանց ազդեցության բարձրացմանը, սակայն արհմիությունների արդյունավետությունը և երկրի սոցիալ-տնտեսական միջավայրը կարևոր դեր են խաղում: Այդ իսկ պատճառով շատ հաճախ արհմիությունների արդյունավետությունը կարող է տարբեր լինել զարգացած և զարգացող երկրներում:

Զբաղվածության պաշտպանության օրենսդրությունը նույնպես էական դեր է խաղում եկամուտների հավասարաչափ բաշխման գործում: Չնայած նրան, որ էմպիրիկ ուսումնասիրությունները բացասական կապ են գտել զբաղվածության պաշտպանության օրենսդրության խստության աստիճանի և եկամուտների անհավասարության միջև, դրանց ազդեցության չափը կախված է ոչ միայն օրենսդրության խստության աստիճանից, այլև մի շարք այլ գործոններից: Բացի դրանից չափազանց խիստ օրենսդրությունը կարող է խթանել ոչ ֆորմալ տնտեսության աճը և խոչընդոտել գործատուների ճկունությունը:

Աշխատանքի պահպանման սխեմաները, որոնք կիրառվում են հատկապես ճգնաժամային իրավիճակներում, նպաստում են աշխատատեղերի պահպանմանը և բնակչության եկամուտների կայունացմանը: Էմպիրիկ գնահատումները ցույց են տալիս, որ աշխատանքի պահպանման սխեմաների միջոցով ճգնաժամերի ժամանակ բնակչության կորցրած եկամուտների փոխատուցումը կանխում է եկամուտների անհավասարության կտրուկ աճը: Սակայն եկամուտների անհավասարության վրա աշխատանքի պահպանման սխեմաների ազդեցությունը տարբեր է ըստ երկրների, որը պայմանավորված է ֆինանսավորման ծավալներից, պետական աջակցության ճշգրտվածությունից և աշխատանքի շուկայի կառուցվածքից:

Ատենախոսության երկրորդ գլուխում՝ «ՀՀ աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցությունը եկամուտների անհավասարաչափ բաշխման վրա», ուսումնասիրվել է ՀՀ-ում բնակչության դրամական եկամտի աղբյուրները

և եկամուտների անհավասարությունը բնութագրող ցուցանիշները, ապա ուսումնասիրվել է ՀՀ-ում գործող աշխատանքի շուկայի ինստիտուտների էությունը, գործառույթները և իրավական կարգավորումները: Երկրորդ գլխում գնահատվել է նաև ՀՀ-ում եկամուտների անհավասարության վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցության չափերը և ուղղությունները:

ՀՀ-ում բնակչության եկամուտների կառուցվածքի վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ հիմնական եկամտի աղբյուրներն են՝ վարձու աշխատանքից ստացված եկամուտները, պետական թոշակները և նպաստները, մասնավոր տրանսֆերտները և ինքնազբաղվածությունից ստացված եկամուտները: Բնակչության եկամտի կառուցվածքում եկամտի ամենամեծ աղբյուրը վարձու աշխատանքից ստացված եկամուտներն են, որը կազմում է միջինում բնակչության ընդհանուր եկամուտների 52 տոկոսը:

Վերլուծության շրջանակում մշակվել է նաև ինդեքս ցուցանիշ, որի միջոցով հաշվարկվել է տարբեր քվանտիլային խմբերում բնակչության եկամուտների աճի տեմպերը և եկամուտների անհավասարությունը եռամսյակային կտրվածքով: Հաշվարկելով վերոնշյալ չորս եկամտի աղբյուրների աճի տեմպերը և դրանք բազմապատկելով համապատասխան եկամտի աղբյուրի տվյալ տարվա կշռով՝ կստացվի համապատասխան եկամտի աղբյուրի նպաստումը բնակչության եկամուտների փոփոխությանը: Այնուհետև գումարելով բոլոր եկամտի աղբյուրների նպաստումները՝ կստացվի բնակչության եկամտի փոփոխության տեմպը և ուղղությունը[1]:

Բանաձև 1

$$\text{ԵՓԱՏ} = \text{ՄԱ}_{\text{աճի տեմպ}} * \text{ՎԱ}_{\text{կշիռ}} + \text{ՊԾ}_{\text{աճի տեմպ}} * \text{ՊԵ}_{\text{կշիռ}} + \text{ԳԻ}_{\text{աճի տեմպ}} * \text{ԳՎ}_{\text{կշիռ}} + \text{ԴՓ}_{\text{աճի տեմպ}} * \text{ՏԵ}_{\text{կշիռ}}$$

Եռամսյակային ինդեքս ցուցանիշի միջոցով ՀՀ-ում եկամուտների անհավասարության վիճակի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ վերջին տարիներին եկամուտների անհավասարաչափ բաշխման բարելավվումը հիմնականում տեղի է ունենում ցածր քվանտիլներում գտնվող բնակչության եկամուտների կառուցվածքում վարձու աշխատանքից ստացված եկամուտների տեսակարար կշռի ավելացման շնորհիվ:

Երկրորդ գլխում գնահատվել է ՀՀ-ում եկամուտների անհավասարության վրա աշխատանքի շուկայի ինստիտուտների ազդեցությունները: Եկամուտների անհավասարության վրա նվազագույն աշխատավարձի ազդեցությունը գնահատելու համար կազվել է պանելային մոդել, որի միջոցով հաշվարկվել է

[1] Ավագյան, Գ., Թորոսյան, Ա., Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը բնակչության եկամուտների անհավասարության վրա Հայաստանի Հանրապետությունում, Բանբեր ՀՊՏՀ, N2, 2022, էջ 9-26:

նվազագույն աշխատավարձի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա[2]:Մոդելն ունի հետևյալ տեսք՝

Բանաձև 2

$$G_{it} = \beta_0 + \beta_1 * MW_{it} + u_i + a_{it}$$

Որտեղ՝ G_{it} – i-րդ երկրում t-րդ տարում Ջինիի գործակիցն է, MW_{it} – i-րդ երկրում t-րդ տարում նվազագույն աշխատավարձն է, u_i – i-րդ երկրում մոդելի ֆիքսված էֆեկտի գործակիցն է, a_{it} - մոդելի սխալն է:

Պանելային մոդելների արդյունքները ցույց են տվել, որ որ նվազագույն աշխատավարձի մեկ միավոր աճը Ջինիի գործակիցը նվազեցնում է 0.046 միավորով: Սա նշանակում է, որ ուսումնասիրվող երկրներում նվազագույն աշխատավարձը դրական է ազդում եկամուտների անհավասարության վրա: Բացի դրանից մոդելի հաշվարկման արդյունքում ֆիքսված ազդեցության գործակիցը Հայաստանի համար ստացվել է -0.27, ինչը ցույց է տալիս, որ նվազագույն աշխատավարձի ազդեցությունից բացի Հայաստանում եկամուտների անհավասարությունը հակված է լինել ավելի ցածր, քան մոդելում ընդգրկված երկրների միջին ցուցանիշը: Սա ենթադրում է, որ երկրին բնորոշ և ժամանակի ընթացքում անփոփոխ գործոնները, ինչպիսիք են ինստիտուտցիոնալ կարգավորումները, տնտեսական կառուցվածքները կամ սոցիալ-մշակութային առանձնահատկությունները նպաստում են եկամուտների ավելի հավասարաչափ բաշխմանը:

Եկամուտների անհավասարության վրա արիմիությունների ազդեցությունը գնահատելու համար կազմվել են երեք պանելային մոդելներ[3]: Առաջին մոդելի միջոցով հաշվարկվել է արիմիությունների խտության ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա:

Բանաձև 3

$$G_{it} = \beta_0 + \beta_1 * UD_{it} + u_i + a_{it}$$

Որտեղ՝ G_{it} – i-րդ երկրում t-րդ տարում Ջինիի գործակիցն է, UD_{it} – i-րդ երկրում t-րդ տարում արիմիությունների խտության ցուցանիշն է, u_i – i-րդ երկրում մոդելի ֆիքսված էֆեկտի գործակիցն է, a_{it} – մոդելի սխալն է:

Երկրորդ մոդելի միջոցով հաշվարկվել է արիմիությունների խտության ազդեցությունը զբաղվածության մակարդակի վրա:

Բանաձև 4

$$Employ_{it} = \beta_0 + \beta_1 * UD_{it} + u_i + a_{it}$$

---

[2] Mayilyan, F.N., Torosyan, A.A., The Impact of Minimum Wage on Income Inequality in Developing Countries. In: Popkova, E.G., Sergi, B.S. (eds) ESG Management of the Development of the Green Economy in Central Asia. Environmental Footprints and Eco-design of Products and Processes. Springer, Cham, 2023, pp. 355-364 - https://doi.org/10.1007/978-3-031-46525-3_38.

[3] Torosyan A., Assessing the Influence of Trade Unions on Income Redistribution A Comparative Analysis with Evidence from Armenia. Messenger of ASUE, 1(79), 2025.

Որտեղ՝ $Employ_{it}$ – i-րդ երկրում t-րդ տարում զբաղվածության մակարդակն է, UD_{it} – i-րդ երկրում t-րդ տարում արհմիությունների խտությունն է, u_{it} – i-րդ երկրում մոդելի ֆիքսված էֆեկտի գործակիցն է, a_i – մոդելի սխալն է:

Երրորդ մոդելի միջոցով հաշվարկվել է արհմիությունների խտության ազդեցությունը միջին ամսական աշխատավարձի մակարդակի վրա: Երրորդ մոդելն ունի հետևյալ տեսքը՝

Բանաձև 5

$$AW_{it} = \beta_0 + \beta_1 * UD_{it} + u_i + a_{it}$$

Որտեղ՝ AW_{it} – i-րդ երկրում t-րդ տարում միջին ամսական աշխատավարձի մակարդակն է, UD_{it} – i-րդ երկրում t-րդ տարում արհմիությունների խտությունն է, u_i – i-րդ երկրում մոդելի ֆիքսված էֆեկտի գործակիցն է, a_{it} – մոդելի սխալն է:

Պանելային մոդելների արդյունքներից պարզ է դառնում, որ արհմիությունների խտության ցուցանիշի մեկ միավոր աճը Ջինիի գործակիցը նվազեցնում է 0,083 միավորով: Սա ցույց է տալիս, որ արհմիությունների խտությունը բացասաբար է ազդում եկամուտների անհավասարության վրա: Արհմիությունները հնարավորություն են տալիս աշխատողների ավելի լայն շրջանակին ունենալ մրցակցային աշխատավարձեր և ավելի լավ աշխատանքային պայմաններ: Սրա շնորհիվ բարձրանում են ցածր աշխատավարձ ստացողների աշխատավարձերը ի հաշիվ բարձր աշխատավարձ ստացողների աշխատավարձերի: Միևնույն ժամանակ ֆիքսված ազդեցության գործակիցը Հայաստանի համար ստացվել է -2.72, ինչը ցույց է տալիս, որ արհմիությունների խտության ազդեցությունից բացի Հայաստանում եկամուտների անհավասարությունը հակված է լինել ավելի ցածր, քան մոդելում ընդգրկված երկրների միջին ցուցանիշը: Սա ենթադրում է, որ երկրին բնորոշ և ժամանակի ընթացքում անփոփոխ գործոնները, ինչպիսիք են կառուցվածքային, պատմական, ինստիտուտցիոնալ և մշակութային առանձնահատկություններ նպաստում են եկամուտների ավելի հավասարաչափ բաշխմանը: Զբաղվածության մակարդակի վրա արհմիությունների խտության ազդեցությունը գնահատող մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ արհմիությունների խտության մեկ միավոր աճը զբաղվածության մակարդակը ավելացնում է 0,019 միավորով: Արհմիությունները մի կողմից աշխատում են պահպանել գոյություն ունեցող աշխատատեղերը, իսկ մյուս կողմից, արհմիությունները թույլ չեն տալիս, որպեսզի գործատուները շահագործեն աշխատողներին՝ ստիպելով գործատուներին նոր աշխատողներ ներգրավել հավելյալ աշխատանք իրականացնելու համար: Միջին ամսական աշխատավարձի վրա արհմիությունների խտության ազդեցությունը գնահատող մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ արհմիությունների խտության մեկ միավոր աճը միջին ամսական աշխատավարձը բարձրացրել է 31,6 միավորով: Արհմիությունների հիմնական գործառույթներից է՝ բանակցել գործատուների հետ իրենց անդամներին մրցակցային աշխատավարձ ապահովելու համար:

Սրա շնորհիվ շատ հաճախ արհմիությունների անդամները ստանում են շուկայական աշխատավարձերից բարձր աշխատավարձ, որն էլ բարձրացնում է մակրոմակարդակում միջին աշխատավարձերի մակարդակը:

Եկամուտների անհավասարության վրա զբաղվածության պաշտպանության օրենսդրության ազդեցություն գնահատելու համար ուսումնասիրվել է մի խումբ երկրներում զբաղվածության պաշտպանության օրենսդրության խստության աստիճանը և համեմատվել է այդ երկրներում եկամուտների անհավասարության ու ստվերային տնտեսության չափերը: Ուսումնասիրության համար ընտրվել են հետխորհրդային երկրները, որտեղ ինտիտուտները սկսել են ձևավորվել գրեթե նույն ժամանակահատվածում, ինչպես Հայաստանում:



Գծապատկեր N 1. Ուսումնասիրվող երկրներում զբաղվածության պաշտպանության օրենսդրության խստության աստիճանները[4]

Վերոնշյալ երկրներում զբաղվածության պաշտպանության օրենսդրության խստության աստիճանի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ուսումնասիրվող երկրների շարքում զբաղվածության պաշտպանության ամենախիստ օրենսդրությունն ունեն Հայաստանը և Ղրղզստանը, իսկ ամենափոքր խստությունը ունեն Ուզբեկաստանը և Տաջիկստանը: Զբաղվածության պաշտպանության օրենսդրության և եկամուտների անհավասարության ու ստվերային տնտեսության չափերի փոխազդեցության ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ զբաղվածության պաշտպանության օրենսդրության խստության և Ջինիի գործակցի միջև կա բացասական կախվածությունը, չնայած այդ կախվածությունը թույլ է: Սա փաստում է այն, որ որքան երկրներում զբաղվածության պաշտպանության օրենսդրությունը ավելի խիստ է, Ջինիի գործակիցը ավելի փոքր է, հետևաբար եկամուտները ավելի հավասար են բաշխված: Իսկ զբաղվածության պաշտպանության օրենսդրության խստությունը և ստվերային տնտեսության

[4] Գծապատկերը հաշվարկվել և կազմվել է հեղինակի կողմից International Labor Organization, EPLex, EPLex indicators by country, 2024 - https://eplex.ilo.org/ տվյալների հիման վրա:

չափերը հակառակ կախվածության մեջ են: Այսինքն՝ զբաղվածության պաշտպանության ավելի խիստ օրենսդրություն ունեցող երկրներում ստվերային տնտեսությունը ավելի փոքր է:

Կորոնավիրուսային համավարակի ժամանակ ՀՀ կառավարության կողմից իրականացրած աշխատանքի պահպանման սխեմաների ազդեցությունը բնակչության եկամուտների, հետևաբար՝ նաև եկամուտների բաշխվածության վրա գնահատելու համար օգտագործվել է Վ. Լամի և Ա. Սոլովյովայի հետազոտության մեջ օգտագործված մեթոդաբանությունը: Այդ մեթոդաբանության էությունը այն է, որ հաշվարկվում է երկրի համախառն ազգային եկամուտի և համախառն տնօրինվող եկամուտի տարբերությունը, որը ցույց է տալիս երկրի կառավարության վարած վերաբաշխողական քաղաքականության ազդեցությունը բնակչության եկամուտների վրա: Այնուհետև հաշվարկվում է համախառն տնօրինվող եկամտի և կորոնավիրուսային համավարակի ժամանակ պետական բյուջեից աշխատանքի պահպանման սխեմաների վրա կատարված ծախսերի տարբերությունը, որը ցույց է տալիս աշխատանքի պահպանման սխեմաների ազդեցությունը բնակչության տնօրինվող եկամուտների վրա[5]:



Գծապատկեր N 2. ՀՀ-ում համախառն ազգային եկամուտը և համախառն ազգային տնօրինվող եկամուտը, 2015-2021 թթ. (մլն. դրամ)[6]

2020 թվականին ՀՀ պետական բյուջեից աշխատանքի պահպանման սխեմաների վրա ծախսվել է 107,6 միլիարդ դրամ[7]: Եթե 2020 թվականի համախառն ազգային տնօրինվող եկամտից հանենք աշխատանքի պահպանման սխեմաների վրա կատարված ծախսերը և հաշվարկենք, թե քանի տոկոսով է նվազել նախորդ տարվա համախառն ազգային տնօրինվող եկամտի

---

[5] Lam, W. R., & Solovyeva, A., How effective were job-retention schemes during the COVID-19 pandemic? A Microsimulation Approach for European Countries. International Monetary Fund, 2023, pp. 9-16.

[6] ՀՀՎԿ, Հայաստանի Ազգային հաշիվներ, 2016-2023 թթ.:

[7] ՀՀ Ֆինանսների նախարարություն, Պետական բյուջեի հաշվետվություններ, 2020-2021 թթ.- https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/

նկատմամբ, ապա կտեսնենք, որ առանց աշխատանքի պահպանման սխեմաների այն կնվազեր 6,7 տոկոսով: Սա ցույց է տալիս, որ աշխատանքի պահպանման սխեմաների միջոցով բնակչության տնօրինվող եկամուտը 1,5 տոկոսով ավելի քիչ է նվազել, քան այն դեպքում, եթե աշխատանքի պահպանման սխեմաները չօգտագործվեին:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Աշխատանքի շուկայի ինստիտուտների բարելավման ուղիները եկամուտների անհավասարության նվազեցման համատեքստում», քննարկվել է ՀՀ աշխատանքի շուկայում գործող ինստիտուտների կատարելագործման ուղիները, ինչպես նաև ՀՀ-ում աշխատանքի շուկայի նոր ինստիտուտների ներդրման հնարավորությունները:

Արհմիությունների արդյունավետության վերաբերյալ տարբեր հեղինակների կատարած աշխատանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ արհմիությունների խտության նվազումը նվազեցնում է դրանց բանակցային ուժը, հետևաբար՝ նվազում է նաև գործունեության արդյունավետությունը: Իսկ արհմիությունների ցածր արդյունավետությունը երկարաժամկետում կտրվածքում բերում է եկամուտների անհավասարության մեծացման: Այս խնդրի կարգավորման համար նպաստավոր քայլ կլինի ոլորտային համաձայնագրերի ինստիտուտի ներդրումը, որը հնարավորություն կտա աշխատանքային իրավունքների քննարկման ժամանակ ներառել աշխատողների իրավունքները ներկայացնող մարմինների ավելի լայն շրջանակ:

Չնայած նրան, որ ընդհանուր գնահատումը ցույց է տալիս, որ զբաղվածության պաշտպանության ավելի խիստ օրենսդրություն ունեցող երկրներում եկամուտների անհավասարությունը ավելի ցածր է, նախկին ԽՍՀՄ երկրների շարքում կան այնպիսի երկրներ, ինչպես օրինակ Մոլդովան և Ուկրաինան, որտեղ զբաղվածության պաշտպանության օրենսդրությունը ավելի մեղմ է, սակայն եկամուտների անհավասարությունը ավելի փոքր է, քան ՀՀ-ում: Այդ իսկ պատճառով կարևոր է նաև եկամուտների անհավասարության վրա զբաղվածության պաշտպանության օրենսդրության ազդեցության արդյունավետության բարձրացումը: Դրա համար նպաստավոր քայլ կարող է լինել զբաղվածության պաշտպանության օրենսդրությունում ոլորտային հատուկ աշխատանքից ազատման հարմարեցված կանոնների ներդրումը, որը հնարավորություն կտա որոշակի ոլորտներում գործող գործատուների համար ունենալ աշխատանքից ազատման ավելի պարզ մեխանիզները պայմանավորված իրենց ոլորտում իրականացվող աշխատանքների անկայուն և ցիկլային բնույթով:

Քանի որ ատենախոսության շրջանակներում գնահատվել է ազգային և տարածաշրջանային նվազագույն աշխատավարձի համակարգեր ունեցող երկրներում նվազագույն աշխատավարձի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա, իսկ ՀՀ-ում գործում է ազգային նվազագույն աշխատավարձի համակարգը, գնահատվել է նաև ոլորտային և մասնագիտական նվազագույն աշխատավարձերի ազդեցությունը

եկամուտների անհավասարության վրա: Դրա համար կազմվել է պանելային մոդել, որի միջոցով հաշվարկվել է նվազագույն աշխատավարձի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա[8]: Մոդելը ունի հետևյալ տեսք՝

Բանաձև 6

$$G_{it} = \beta_0 + \beta_1 * MW_{it} + u_i + a_{it}$$

Որտեղ՝ G_{it} – i-րդ երկրում t-րդ տարում Ջինիի գործակիցն է, MW_{it} – i-րդ երկրում t-րդ տարում նվազագույն աշխատավարձն է, u_i – i-րդ երկրում մոդելի ֆիքսված էֆեկտի գործակիցն է, a_{it} – մոդելի սխալն է:

Պանելային մոդելների արդյունքները ցույց են տվել, որ ոլորտային և մասնագիտական նվազագույն աշխատավարձի համակարգեր ունեցող ուսումնասիրվող երկրներում նվազագույն աշխատավարձի մեկ միավոր աճը Ջինիի գործակիցը նվազեցնում է 0,062 միավորով: Ի տարբերություն ազգային և տարածաշրջանային նվազագույն աշխատավարձի համակարգեր ունեցող երկրների, որտեղ նվազագույն աշխատավարձի մեկ միավոր աճը Ջինիի գործակիցը նվազեցնում է 0,046 միավորով, ոլորտային և մասնագիտական նվազագույն աշխատավարձի համակարգեր ունեցող երկրներում նվազագույն աշխատավարձի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա ավելի մեծ է:

Հասկանալու համար արդյոք ոլորտային նվազագույն աշխատավարձի ներդրումը ՀՀ-ում ավելի նպաստավոր կլինի ինչպես եկամուտների անհավասարության վրա, այնպես էլ տնտեսության մյուս ոլորտների վրա, անհրաժեշտ է գնահատել ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի ազդեցությունը տնտեսության տարբեր ասպեկտների վրա: Դրա համար կազմվել է երեք պանելային մոդելներ, որոնց միջոցով հաշվարկվել է նվազագույն աշխատավարձի ազդեցությունը միջին աշխատավարձի, ընկերությունների արտադրողականության և զբաղվածության մակարդակների վրա[9]: Պանելային առաջին մոդելի միջոցով հաշվարկվել է նվազագույն աշխատավարձի ազդեցությունը միջին աշխատավարձի վրա:

Բանաձև 7

$$ՄԱ_{it} = \beta_0 + \beta_1 * ՆԱ_{it} + u_i + a_{it}$$

Որտեղ $ՄԱ_{it}$-ն i-րդ ոլորտում t-րդ տարում միջին ամսական անվանական աշխատավարձն է, $ՆԱ_{it}$-ն i-րդ ոլորտում t-րդ տարում նվազագույն

---

[8] Mayilyan, F.N., Torosyan, A.A., The Impact of Minimum Wage on Income Inequality in Developing Countries. In: Popkova, E.G., Sergi, B.S. (eds) ESG Management of the Development of the Green Economy in Central Asia. Environmental Footprints and Eco-design of Products and Processes. Springer, Cham, 2023, pp. 355-364 - https://doi.org/10.1007/978-3-031-46525-3_38.

[9] Mayilyan, F.N., Torosyan, A.A., Possibilities of implementing the Sectoral Minimum Wage in RA. In: Popkova, E.G., (eds) Technological Horizons of Decarbonization Based on Environmental Innovations. Springer, Cham, 2025.

աշխատավարձն է, u_i-ն i-րդ ոլորտում ֆիքսված էֆեկտի գործակիցն է, a_{it} – մոդելի սխալն է:

Պանելային երկրորդ մոդելի միջոցով հաշվարկվել է նվազագույն աշխատավարձի ազդեցությունը ընկերությունների արտադրողականության վրա, որտեղ ընկերությունների արտադրողականությունը հաշվարկվել է տնտեսության ոլորտներում ստեղծված համախառն ավելացված արժեքի և զբաղվածների թվի հարաբերության միջոցով:

Բանաձև 8

$$\frac{ՀԱԱ_{it}}{ԶԹ_{it}} = \beta_0 + \beta_1 * ՆԱ_{it} + u_i + a_{it}$$

Որտեղ $ՀԱԱ_{it}$-ն i-րդ ոլորտում t-րդ տարում համախառն ավելացված արժեքն է, $ԶԹ_{it}$-ն i-րդ ոլորտում t-րդ տարում զբաղվածների թվաքանակն է, u_i-ն i-րդ ոլորտում ֆիքսված էֆեկտի գործակիցն է, a_{it} – մոդելի սխալն է:

Պանելային երրորդ մոդելի միջոցով հաշվարկվել է նվազագույն աշխատավարձի ազդեցությունը զբաղվածության վրա, որտեղ որպես զբաղվածությունը բնութագրող ցուցանիշ է ընտրվել զբաղվածների թվաքանակը:

Բանաձև 9

$$ԶԹ_{it} = \beta_0 + \beta_1 * ՆԱ_{it} + u_i + a_{it}$$

Որտեղ $ԶԹ_{it}$-ն i-րդ ոլորտում t-րդ տարում զբաղվածների թվաքանակն է, u_i-ն i-րդ ոլորտում ֆիքսված էֆեկտի գործակիցն է, a_{it} – մոդելի սխալն է:

Պանելային մոդելի հաշվարկման արդյունքում ստացվել է, որ նվազագույն աշխատավարձի մեկ միավոր փոփոխությունը 2,98 միավորով նույն ուղղությամբ փոփոխում է միջին ամսական աշխատավարձը: Այսինքն՝ նվազագույն աշխատավարձի աճը հանգեցնում է աշխատավարձի ընդհանուր մակարդակի բարձրացմանը, և քանի որ աշխատանքային եկամուտները կազմում են բնակչության ընդհանուր եկամուտների մեծ մասը, հետևաբար՝ աշխատավարձերի մակարդակի բարձրացումը դրական է ազդում ոչ միայն ամբողջ բնակչության եկամուտների վրա, այլ նաև նպաստում է աղքատ բնակչության եկամուտների ավելացմանը: Մոդելի արդյունքներից նաև պարզ է դառնում, որ նվազագույն աշխատավարձի մեկ միավոր փոփոխությունը 0,30 միավորով նույն ուղղությամբ փոփոխում է ՀՀ-ի տնտեսության տարբեր ոլորտներում արտադրողականությունը: Այսինքն՝ նվազագույն աշխատավարձի ավելացումը նպաստում է ընկերության ընդհանուր արտադրողականության ավելացմանը, որը կարող է տեղի ունենալ ինչպես աշխատողների մոտիվացիայի ավելացման, այնպես էլ ընկերություններում կապիտալ ներդրումների խթանման շնորհիվ: Ըստ մոդելի արդյունքների՝ մեկ միավոր նվազագույն աշխատավարձի փոփոխությունը զբաղվածների թվաքանակը նույն ուղղությամբ փոփոխում է 0,0002 միավորով: Այսինքն՝ նվազագույն աշխատավարձի ազդեցությունը զբաղվածության վրա աննշան է և գրեթե հավասար է զրոյի:

Հիմք ընդունելով կատարված գնահատումների արդյունքները՝ գնահատվել է ՀՀ-ում ոլորտային նվազագույն աշխատավարձի հնարավոր ներդրումը: Դրա համար օգտագործվել է երկու մեթոդ՝ 1. միջին աշխատավարձի և նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը, 2. ոլորտային արտադրողականությունը: Առաջին մեթոդով առաջարկվում է հավասարեցնել հարաբերակցությունը 3-ին կամ մոտեցնել դրան՝ կախված ոլորտի առանձնահատկություններից: Երկրորդ մեթոդով առաջարկվում է ավելացնել նվազագույն աշխատավարձը՝ ըստ արտադրողականության մակարդակների՝ ավելի բարձր արտադրողականությամբ ոլորտներում՝ առավել մեծ չափով: Մոդելային հաշվարկները ցույց են տալիս, որ ոլորտային նվազագույն աշխատավարձի համակարգի ներդրման դեպքում միջին աշխատավարձը կբարձրանա 12-15 տոկոսով, արտադրողականությունը՝ մինչև 50 տոկոս, իսկ զբաղվածության փոփոխությունը կլինի աննշան:

Ատենախոսության շրջանակներում առաջարկվել է նաև աշխատանքի պահպանման սխեմաների ներդրումը որպես երկարաժամկետ քաղաքականության գործիք՝ հաշվի առնելով դրանց արդյունավետությունը կորոնավիրուսային համավարակի ժամանակ: Ուսումնասիրելով տարբեր երկրներում կորոնավիրուսային համավարակի ժամանակ բնակչության սպառողական վարքագծի և ընդհանուր տնտեսության փոփոխությունները՝ պարզ է դարձել, որ այն երկրներում, որտեղ աշխատանքի պահպանման սխեմաները օգտագործվել են որպես երկարաժամկետ քաղաքականության գործիքներ, համավարակի բացասական հետևանքները ավելի փոքր են եղել:

Հաշվարկելու համար աշխատանքի պահպանման սխեմաների ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա կազմվել է պանելային մոդել, որտեղ որպես անկախ փոփոխական է ընտրվել կորոնավիրուսով վարակվածների թվաքանակի աճի տեմպը եռամսյակային կտրվածքով, իսկ որպես կախյալ փոփոխական է ընտրվել գործազրկության մակարդակը եռամսյակային կտրվածքով[10]: Մոդելը ունի հետևյալ տեսքը՝

Բանաձև 10

$$UNEMPLOYMENT_{RATE_{it}} = \beta_0 + \beta_1 * COVID_{GROWTH_{it}} + u_i + a_{it}$$

Որտեղ $COVID_{GROWTH}$-ը i-րդ երկրում t-րդ տարում կորոնավիրուսով վարակված մարդկանց թվաքանակի աճի տեմպն է, $UNEMPLOYMENT_{RATE}$-ը i-րդ երկրում t-րդ տարում գործազրկության մակարդակն է, u_i-ն i-րդ երկրում ֆիքսված էֆեկտի գործակիցն է, a_{it} – մոդելի սխալն է:

Աշխատանքի պահպանման սխեմաները որպես երկարաժամկետ քաղաքականության գործիքներ օգտագործող երկրների համար գնահատված

[10] Torosyan A., Job Retention Schemes as a Long-Term Employment Polic. Messenger of ASUE, 2(77), 2024, pp. 5-19 - DOI:10.52174/1829-0280_2024.2-5.

պանելային մոդելների արդյունքները ցույց են տալիս, որ աշխատանքի պահպանման սխեմաները որպես աշխատաշուկայում երկարաժամկետ քաղաքականության գործիք օգտագործող երկրներում կորոնավիրուսով վարակվածների թվաքանակի աճի տեմպի 1 միավոր փոփոխությունը գործազրկության մակարդակը փոփոխում է 0,0015 միավորով նույն ուղղությամբ: Աշխատանքի պահպանման սխեմաները որպես աշխատանքի շուկայում կարճաժամկետ քաղաքականության գործիք օգտագործող երկրների համար հաշվարկված պանելային մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ կորոնավիրուսով վարակվածների թվաքանակի աճի տեմպի 1 միավոր փոփոխությունը գործազրկության մակարդակը փոփոխում է 0,03 միավորով նույն ուղղությամբ: Այսինքն, կարելի է նկատել, որ այն երկրներում, որտեղ աշխատանքի պահպանման սխեմաները օգտագործվում են կարճաժամկետ գործիքներ, կորոնավիրուսով վարակվածների թվաքանակի փոփոխությունը գրեթե 20 անգամ ավելի մեծ ազդեցություն է ունենում գործազրկության մակարդակի վրա, քան այն երկրներում, որտեղ աշխատանքի պահպանման սխեմաները օգտագործվում են որպես երկրաժամկետ գործիքներ:

Ատենախոսության եզրակացություններ և առաջարկություններ բաժնում ընդհանրացվել են հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ամփոփված են հետևյալ դրույթներում.

- Աշխատանքի շուկայի ինստիտուտները՝ նվազագույն աշխատավարձը, արհմիությունները, զբաղվածության պաշտպանության օրենսդրությունը և աշխատանքի պահպանման սխեմաները, ունեն զգալի ազդեցություն եկամուտների բաշխման վրա:
- Ատենախոսության շրջանակներում հաշվարկված եռամսյակային ինդեքս ցուցանիշի միջոցով ՀՀ-ում եկամուտների անհավասարության վիճակի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ 2004-2018 թվականների ընթացքում եկամուտների անհավասարությունը երկրում խորացել է, իսկ 2019 թվականից սկսած որոշակիորեն նվազել է, որը պայմավորված է ցածր եկամուտ ունեցողների աշխատավարձային եկամուտների տեսակարար կշռի աճով:
- Ազգային և տարածաշրջանային նվազագույն աշխատավարձի համակարգերն ունեն դրական ազդեցություն եկամուտների անհավասարության նվազեցման վրա, սակայն ոլորտային և մասնագիտական նվազագույն աշխատավարձի համակարգերի ազդեցությունը ավելի մեծ է:
- ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի բարձրացումը դրական է ազդում միջին աշխատավարձի և արտադրողականության վրա, իսկ զբաղվածության վրա ազդեցությունն աննշան է:
- Եթե ոլորտային նվազագույն աշխատավարձի համակարգը ներդրվի ճկուն կարգավորումներով, ապա այն կարող է առավել արդյունավետ կերպով

նպաստել եկամուտների անհավասարության հիմնախնդրի կարգավորմանը:

- Արհմիությունների խտության աճը նպաստում է եկամուտների հավասարեցմանը, զբաղվածության և միջին աշխատավարձի աճին:
- ՀՀ-ում արհմիությունների արդյունավետությունը ցածր է՝ պայմանավորված խտության ցուցանիշի նվազումով և թույլ ներկայացվածությամբ:
- Զբաղվածության պաշտպանության խիստ իրավական դաշտ ունեցող երկրներում եկամուտների անհավասարությունն ավելի փոքր է, քանի որ նման օրենսդրությունը սահմանում է աշխատավարձի և աշխատանքային պայմանների որոշակի անվտանգություն առանձնապես ցածր եկամուտ ստացողների համար:
- ՀՀ կառավարության կողմից իրականացված աշխատանքի պահպանության սխեմաները մեծապես ազդել են բնակչության համախառն ազգային տնօրինվող եկամուտների վրա: Այսինքն՝ աշխատանքի պահպանման սխեմաների չկիրառումը ճգնաժամի ընթացքում էական «ճեղք» կառաջացներ համախառն ազգային եկամուտների և համախառն ազգային տնօրինվող եկամուտների մեջ:
- Աշխատանքի պահպանման սխեմաները ավելի արդյունավետ են գործում, երբ դրանք օգտագործվում են որպես երկարաժամկետ քաղաքականության գործիքներ: Այն երկրներում, որտեղ աշխատանքի պահպանման սխեմաները մշտապես կիրառվել են, գործազրկության մակարդակն ավելի քիչ է աճել համավարակի պատճառով, և եկամուտների անհավասարությունն նույնպես ավելի քիչ ազդեցություն է կրել:

Ատենախոսության շրջանակներում սահմանվել են մի շարք քաղաքականության ուղղություններ և կարգավորումներ, որոնք բխում են ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծության արդյունքներից: Դրանք են՝

1. ՀՀ-ում ներդնել ոլորտային նվազագույն աշխատավարձի համակարգը, որը հնարավորություն կտա մի կողմից ավելի մեծ ազդեցություն ունենալ եկամուտների անհավասարության վրա, մյուս կողմից հնարավորություն կտա ավելի մեծ ճկունությամբ սահմանել նվազագույն աշխատավարձի շեմեր տնտեսության տարբեր ոլորտներում:
2. ՀՀ-ում ոլորտային համաձայնագրերի մեխանիզմ, որի շնորհիվ յուրաքանչյուր ոլորտում գոյություն ունեցող արհմիությունները համատեղ բանակցեն աշխատավարձերի և աշխատանքային պայմանների շուրջ: Դա թույլ կտա ներգրավել ավելի լայն շրջանակի աշխատողների ներկայացուցիչների և բարձրացնել արհմիությունների բանակցային ուժը:
3. ՀՀ-ում ապահովել արհմիությունների գործունեության թափանցիկությունը, օրինակ՝ պարբերական զեկույցների միջոցով, որը հնարավորություն կտա բարձրացնել աշխատողների շրջանում արհմիությունների նկատմամբ վստահության մակարդակը:

4. ՀՀ-ում ներդնել ոլորտային տարբերակված և հարմարեցված օրենսդրությունը, որը հնարավորություն կտա ավելացնել զբաղվածության պաշտպանության ճկունությունը և գործատուները ավելի մեծ ազատություն կունենան ֆորմալ հատվածում գործունեություն իրականացնելու համար:
5. ՀՀ-ում աշխատանքի պահպանման սխեմաները օգտագործել որպես երկարաժամկետ քաղաքականության գործիքներ, որը հնարավորություն կտա բարձրացնել տնտեսության դիմադրողականությունը ապագա ցնցումներին դիմակայելու համար:

Ատենախոսության հիմնական արդյունքները ամփոփվել են 6 հոդվածներում: Դրանք են՝

1. Ավագյան, Գ., Թորոսյան, Ա., Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը բնակչության եկամուտների անհավասարության վրա Հայաստանի Հանրապետությունում, Բանբեր ՀՊՏՀ, N2, 2022, էջ 9-26 - https://asue.am/upload/files/science/banber/2022-year-2/1.pdf
2. Mayilyan, F.N., Torosyan, A.A., The Impact of Minimum Wage on Income Inequality in Developing Countries. In: Popkova, E.G., Sergi, B.S. (eds) ESG Management of the Development of the Green Economy in Central Asia. Environmental Footprints and Eco-design of Products and Processes. Springer, Cham, 2023, pp. 355-364 - https://doi.org/10.1007/978-3-031-46525-3_38
3. Galoyan, D.R., Mayilyan, F.N., Bazinyan, Y.A., Movsisyan, M.E., Torosyan, A.A., Triple Exploitation of Human Capital in Developing Countries. In: Popkova, E.G., Sergi, B.S. (eds) ESG Management of the Development of the Green Economy in Central Asia. Environmental Footprints and Eco-design of Products and Processes, Springer, Cham, 2023, pp. 375-383 - https://doi.org/10.1007/978-3-031-46525-3_40
4. Torosyan A., Assessing the Influence of Trade Unions on Income Redistribution A Comparative Analysis with Evidence from Armenia. Messenger of ASUE, 1(79), 2025, pp. 87-98 - DOI: 10.52174/1829-0280_2025.1-87
5. Torosyan A., Job Retention Schemes as a Long-Term Employment Polic. Messenger of ASUE, 2(77), 2024, pp. 5-19 - DOI:10.52174/1829-0280_2024.2-5
6. Mayilyan, F., Torosyan, A., Unemployment benefits and income inequality: the Armenian experience, Alternative quarterly academic journal, Volume 4, 2024 (October – December), pp. 8-16 - https://alternative.am/2025/01/01/alternative-quarterly-academic-journal-volume-4-2024-october-december/

АЛИК АРМЕНОВИЧ ТОРОСЯН

ИНСТИТУТЫ РЫНКА ТРУДА КАК ИНСТРУМЕНТ РЕГУЛИРОВАНИЯ НЕРАВНОМЕРНОГО РАСПРЕДЕЛЕНИЯ ДОХОДОВ (НА ПРИМЕРЕ РА)

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 – "Теория экономической науки и история экономической мысли".

Защита диссертации состоится 8-го июля 2025 года в 13^{30} на заседании специализированного совета по экономике 015 Коммитета высшего образования и науки Республики Армения, действующего в Ереванском государственном университете, по адресу: г. Ереван, 0025, ул. Х. Абовяна 52.

РЕЗЮМЕ

В диссертации исследуется влияние институтов рынка труда на неравномерность распределения доходов в Республике Армения. В теоретической части раскрывается сущность и классификация таких институтов, как минимальная заработная плата, профсоюзы, законодательство о защите занятости и схемы сохранения рабочих мест. На основе анализа статистических данных и панельных моделей оценивается их влияние на коэффициент Джини, занятость и уровень заработной платы.

Особое внимание уделено разработке квартального индекса оценки динамики доходов различных квантилей, а также сравнительной оценке эффективности национальных и отраслевых моделей минимальной заработной платы. В работе обоснована необходимость перехода к отраслевой системе минимальной оплаты труда, повышения эффективности профсоюзов, разработки гибкого законодательства о занятости и институционализации схем сохранения рабочих мест как долгосрочного инструмента экономической политики.

Предложены практические рекомендации по совершенствованию институтов рынка труда в Армении с целью снижения неравенства доходов и повышения социальной справедливости.

ALIK ARMEN TOROSYAN

LABOR MARKET INSTITUTIONS AS A TOOL FOR REGULATING UNEQUAL INCOME DISTRIBUTION (ON THE EXAMPLE OF THE RA)

The dissertation was submitted for the degree of Candidate of Economic Sciences in the speciality 08.00.01 – "The theory of economic science and the history of economic thought"

The defense of the dissertation will take place on 13^{30} on July 8, 2025 at a meeting of the Specialized Council 015 in Economics of the Committee on Higher Education and Science of the Republic of Armenia, operating at the Yerevan State University, at the address: 0025, st. Kh. Abovyan 52, Yerevan, RA.

ABSTRACT

The dissertation analyzes the impact of labor market institutions on income inequality in the Republic of Armenia. The theoretical framework outlines the nature and typology of key institutions, including minimum wages, trade unions, employment protection legislation, and job retention schemes. Using statistical analysis and panel models, the study evaluates their influence on the Gini coefficient, employment rates, and wage levels.

A quarterly index is developed to assess income dynamics across quantiles, and the comparative effectiveness of national versus sectoral minimum wage systems is examined. The research substantiates the need for transitioning to a sectoral minimum wage framework, strengthening trade unions, introducing sector-specific labor flexibility, and institutionalizing job retention schemes as a long-term economic policy instrument.

The study provides practical policy recommendations to reform Armenia's labor market institutions in order to reduce income inequality and promote social equity.